ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎՁՄ-ՄԱԾՁԲ-15/26

ք. Եղեգնաձոր «13» փետրվարի 2026թ.

ՀՀ Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հարությունյանի, որը գործում է ՀՀ Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ «Պատվիրատու»), մի կողմից, և ԱՐՆԱՐ ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Աղասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է է **համակարգչային սարքերի պահպանման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2,4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **2** օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **280000 (երկու հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:[4]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ԱՐԵԼԻՐ ՍՊԸ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5	ՀՀ Վայոց ձորի մարզ Ք. Վայք
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.-ՁՈՐ ՄԱՐԶՊԵՏ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ VAYOTS DZOR MARZPET OF THE REPUBLIC OF ARMENIA	Ջերմուկի խճուղի 47/50
ՀՎՀՀ 08918507	ՀՎՀՀ 09104264
Հ/Հ 900351051025	Հ/Հ 24113000872500
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար	Յունի բանկ Եղեգնաձորի մասնաճյուղ
Ա. Հարությունյան	Հ. Հարությունյան

Հավելված N 1

13 փետրվարի 2026թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-15/26 ծածկագրով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության						
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Համակարգչային սարքերի պահպանման ծառայություններ	Չափման միավորը դրամ	Ընդհանուր գինը /դրամ/	Ընդհանուր քանակը	Ծառայության հասցեն, կատարման ժամկետը	
1	50311120/1	Համակարգչային սրքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	280000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Համակարգչի					
		HDD և SSD /250 GB/ հիշասարքի փոխարինում կամ վերանորոգում, ներառյալ հիշասարքը		30000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Օպերատիվ հիշողության փոխարինում ներառյալ RAM-ը(DDR3 /8 gb, DDR4/ 4gb)		25000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում , 450WT, ներառյալ բլոկը		15000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Համակարգիչների ընդհանուր սպասարկում , ախտորոշում		5000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Համակարգիչների օպերացիոն համակարգերի վերատեղադրում		5000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Համակարգչի մայրասալիկի վերանորոգում /H510,H610/, ներառյալ մայրասալիկը		40000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը, 9A		15000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Տպիչի վերանորոգում, քարթրիջի լիցքավորում					
		HP 1010/1020/ տպիչի քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները		3500	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		HP 1010/1020/տպիչի քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		HP 1010/1020/ տպիչի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		HP 1010/1020/տպիչի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		HP 1010/1020/3020 տպիչի քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon LBP2900/ տպիչի քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան		3500	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026

		քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը				Շահումյան 5	կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon LBP2900/ տպիչի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon LBP2900/ LBP6000/Mf4010/ տպիչի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon LBP2900/ LBP6000/Mf4010/ տպիչի քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon 3010 տպիչի քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները		3500	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon 3010 տպիչի քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon 3010 տպիչի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon 3010 տպիչի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon MF 237 /226 տպիչի քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon MF 237 /226 տպիչի քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները		3500	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon MF 237 /226 տպիչի քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon MF 237/226 տպիչի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon MF 237/226 տպիչի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		MF 463DW տպիչի քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները		3500	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		MF 463DW տպիչի տպիչի քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		MF 463DW տպիչի տպիչի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Տպիչի և պատճենող սարքերի վերանորոգում				ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Պատճենող սարքի ախտորոշում		5000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև

		փոխարինում **HP LJ 1010, HP LJ 1020, HP LJ 3020, Canon LBP 6000,Canon LBP 2900, Canon 3010,** կամ համարժեքը (ներառյալ թերմոժապավենը)					օրվանից մինչև 15,12,2026
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում **HP LJ 1010, HP LJ 1020, Canon LBP 6000,Canon LBP 2900, Canon 3010,** կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)		8000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում **HP LJ 1010, HP LJ 1020, HP LJ 3020, Canon LBP 6000,Canon LBP 2900, Canon 3010,** կամ համարժեքը (ներառյալ ջերմատաքացուցիչը)		15000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Ատամնանիվի փոխարինում **HP LJ 1010, HP LJ 1020, Canon LBP 6000, Canon LBP 2900, Canon 3010,** կամ համարժեքը (ներառյալ ատամնանիվը)		7000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ ռետինե լիսեռը)		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		6000,Canon LBP 2900, Canon LBP 6030 , Canon 3010, համարժեքը (ներառյալ ատամնանիվը)		2000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon imageRUNNER 2202N քարթրիջի փոխարինում նոր օրիգինալ քարթրիջով		34500	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026
		Canon imageRUNNER 2202N թմբուկի, մաքրող դանակի, կարատրոնի փոխարինում		12000	1	ք. Եղեգնաձոր, Շահումյան 5	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15,12,2026

Անհրաժեշտ է 2026 թվականի ընթացքում կատարել Վայոց Ձորի մարզպետարանին պատկանող համակարգչային և սարքավորումների, պատճենող սարքերի, տպիչի վերանորոգման քարտրիջի լիցքավորման տեխնիկական սպասարկում՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուի մոտ նման պահանջ առաջանալու և կատարողին ներկայացվելու դեպքում: Կատարողի կողմից համակարգչային սարքավորումները աշխատանքային վիճակի պետք է բերվեն ոչ ուշ քան պատվիրատուի կողմից պահանջագիր ներկայացվելու օրվանից՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ Վճարումն իրականացվելու է փաստացի մատուցված ծառայության դիմաց:

1. Համակագչային սարքերի պահպանման ևվերանորոգման ծառայություն Կատարողի կողմից մատուցվելու է Պատվիրատուի մոտ պահանջ առաջանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08918507
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար
Ա. Հարությունյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ԱՐՆԱՐ ՍՊԸ
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք. Վայք
Ջերմուկի խճուղի 47/50
ՀՎՀՀ 09104264
ՀՀ 24113000872500
Յունի բանկ Եղեգնաձորի մասնաճյուղ
Տնօրեն Հ. Աղասյան
Կ.Տ

Հավելված N 2
«13» փետրվարի 2026թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-15/26 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Համակարգչային սրքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ		28000	140000	140000	140000	140000	280000	280000	280000	280000	280000	280000	280000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ» Պետական մարմին **ք.Եղեգնաձոր, Շահումյան 5**
Եղեգնաձորի ՏԳԲ
Հ/Հ 900351051025
ՀՎՀՀ 08918507
Գլխավոր քարտուղար՝
Ա.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԱՐՆԱՐ ՍՊԸ
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք. Վայք
Ջերմուկի խճուղի 47/50
ՀՎՀՀ 09104264
ՀՀ 24113000872500
Յունի բանկ Եղեգնաձորի մասնաճյուղ

Տնօրեն ——— Հ. Աղայան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 3
13» փետրվարի 2026թ. կնքված
ՎՀՄ-ՄԱԾՁԲ-15/26 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

13» փետրվարի 2026թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-15/26 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն